

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ.ԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Այսօր, իհարկե, անվիճելի է այն փաստը, թե ինչ անգնահատելի դեր են խաղացել Հայ Եկեղեցին և կրոնը, և ինչ մեծ ավանդ են ունեցել կրոնի հայ գործիչները հայ ժողովրդի գոյատևման, նրա անցած փոթորկալից ճանապարհին ազգային ինքնագիտակցության ոգու պահպանման, ինչպես փյունիկ վեր հառնելու, նրա զարգացման, հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման, մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Այստեղ տեղին է նշել Պերճ Շիկահեր անունով եգիպտահայ մի մտավորականի «Արև» (1.9.92 թ.) օրաթերթում տպագրված «Հայ Եկեղեցին և հայ հոգևորականների դերը դաստիարակության մեջ» հոդվածի հետևյալ մտքերը. «Հոգևորական ուսուցիչները, միշտ քաղաքացիական ազատ մտայնութեան և ըմբռնումին համամիտ եղած են և մեր դպրութեան արի առաջնորդներն ու ջահակիրները հանդիսացած են: Հոգևորական ուսուցիչները իրենց աշակերտներուն առանձնապէս ցոյց տուած են կեանքի պայծառ ու առաքինի ուղին, յաջողութեան և յարատեւութեան լուսաւոր ճամբան, զերծ պահելով զանոնք, փորձութիւններէ, զանազան ապիկար ու խարդախ գործերէ ու ժխտական ձեռնարկներէ: Հոգեւորական տիպար ուսուցիչներու շընորհիւ է, որ հաւատքի ուժն ու զօրութիւնը թափանցած են մեր ներաշխարհին, մտքին ու հոգիին մէջ: Մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր Դպրոցը, մեր հոգեւորականներն ու մեր ուսուցիչները, լիակատար ամբողջութիւն կը կազմեն, ազուցուած են իրարու և անբաժանելի մասնիկներն են մեր Քրիստոնեայ, կրթասէր ու պատուական ժողովուրդին»:

Այս հարցը, ըստ իս, բավականին լայն ընդգրկում ունի և մեծ ծավալի ուսումնասիրության թեմա է, հիրավի՝ անտակ մի օվկիանոս:

Այդ իսկ առումով սույն հոդվածում ես ուզում եմ անդրադառնալ հայ ժողովրդի այդ նվիրյալներից միայն մեկին:

«Հայոց քրիստոնեությունը ազգային եղավ ի սկզբանե և այդպես էլ մընաց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերու

գյուտով և Ս. Վարդանի արդարության և ազատության շեփորումով» (գիրք 3-րդ, էջ 64):

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի այս խոսքերով եմ ուզում շարունակել խոսքս, մի մարդ, որի յուրաքանչյուր միտքը տոգորված է վառ հայրենասիրությամբ և խորին լավատեսությամբ հայ ժողովրդի պայծառ ու «արևավառ» ապագայի նկատմամբ: Եվ նրա յուրաքանչյուր խոսքը մի լուսաշող պատգամ է մեզ՝ հայերիս, առանձնապես երիտասարդությանը, որին է վիճակվելու կերտել մեր ժողովրդի ապագան:

Վազգեն Առաջինը, նույն ինքը՝ Լևոն-Կարապետ Աբրահամի Պալճյանը, Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի գործնական մանկավարժության բաժինն ավարտելուց հետո, երկար տարիներ (1929—43 թթ.) դասավանդել է Բուխարեստի հայկական դպրոցներում: Պալճյան մանկավարժի աշխատանքի իսկական գնահատականն իր սաների անսքող ջերմությամբ ու մեծ սիրով ասված հետևյալ խոսքերն են.

«Մանկավարժ էր ամբողջ հոգով, ամբողջ էությամբ: Նա ապրում էր իր ուսուցչական աշխատանքով: Եվ զարմանալի չէ, որ հետագայում, երբ նրան վիճակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գայիսոնը, նա չհրաժարվեց մանկավարժական աշխատանքից: Վազգեն Պալճյանը մանկավարժ էր «Կամոքն Աստուծո», և նա պարզապես չէր կարող ապրել առանց աշակերտների: Ազգասեր էր ու հայրենասեր և այդ մտայնությունն էլ հետևողականորեն ներարկում էր իր աշակերտների մեջ: Դասավանդման ժամանակ օգտագործում էր ամեն մի հնարավոր առիթ՝ հայ ժողովրդի հերոսական շրջանի պատմությունից այլևայլ հայրենասիրական դեպքեր պատմելու, այդ դեպքերը վերլուծելու, դրանց հիման վրա մեզ դաստիարակելու համար: Մի խոսքով, պ. Պալճյանը մանկավարժ էր ըստ կոչման» (բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյան):

«Վեհափառի արքայական խոսքը՝ իր հարստությամբ ու բազմերանգությամբ, վաղ մանկության օրերից ուղեցույց ասող է եղել ինձ համար և աշխարհի խճճված ճամփաների խաչմերուկներում շլմորած որբուկ աղջնակիս միշտ հիշեցրել, թե որտեղից եմ գալիս և ուր եմ քայլերս ուղղելու, որպեսզի ապահովաբար պահել կարենամ մեր ոսկեղենիկ մայրենին» (ժողովրդական արտիստուհի Վ. Վարդերեսյան):

«Նախ որպես ուսուցիչ գրավիչ էր իր արտաքինով: Առույգ էր, աշխույժ, երիտասարդ և մանկավարժի պահվածք ուներ: Զայնը հնչուն էր, ախորժալուր, փոքր ինչ մետաղական երանգներով: Միշտ հագնված էր կոկիկ ու անթերի, և դա իր մեջ մի տեսակ պարտավորեցնող բան ուներ մեզ, աշակերտներիս նկատմամբ: Որպես ուսուցիչ շատ հոգատար էր, մինչև վերջ նվիրված իր աշակերտներին: Անկեղծորեն ուրախանում էր նրանց հաջողություններով և վշտանում նրանց անհաջողություններից» (Գ. Ա. Տիրացյան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն):

«Լավ մանկավարժ լինելու հետ մեկտեղ, պարոն Պալճյանը լավ հոգեբան էր, և պատահական չէր, որ նա հետագայում դասավանդեց նաև «հոգեբանություն» առարկան:

Պարոն Պալճյանը բարյացակամ էր և միաժամանակ պահանջկոտ, բազմակողմանիորեն զարգացած և միշտ պատրաստ իր գիտելիքները հաղորդելու աշակերտներին: Նա մեզ մղում էր դեպի աշխատասիրությունը և գիտելիքները, ասելով. «Երբ երեկոյան գլուխդ դնում ես բարձին, հիշիր, թե

այսօր ինչ նոր բան ես սովորել»: Մենք պ. Պալճյանին անվանում ենք ուսուցիչ ճիշտ այնպես, ինչպես ուսուցիչ են անվանել Մեսրոպ Մաշտոցին» (Հակոբ Առաքելյան, Երևանի բժշկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ, դոցենտ):

Իր երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում թե՛ Ռումինիայում (Բուխարեստի Հայկական Ազգային վարժարանում—14 տարի) և թե՛ Հայաստանում (Էջմիածնի հոգևոր ճեմարանում) Կարապետ Պալճյանը, նույն ինքը՝ Վազգեն Առաջինը, կրթել ու դաստիարակել է բազմաթիվ աշակերտներ, որոնք իրենց ազնիվ ու բեղմնավոր աշխատանքով ընշանակալից ներդրում են ունեցել երկու հանրապետությունների կրթական, մշակութային, հասարակական կյանքում:

Կարապետ Պալճյանը ոչ միայն շնորհաշատ և հմուտ մանկավարժ է եղել, այլ նաև ունեցել է բեղմնավոր գրիչ: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական, գեղարվեստական և կրոնական բնույթի աշխատություններ, որտեղ նա իր խոհերը, մտորումներն ու տեսակետներն է արտահայտել հայրենիքի, հայ ժողովրդի, հայրենասիրության, կրթության ու դաստիարակության, լեզվի, հոգեբանության, մշակույթի և կրոնի վերաբերյալ:

Կարապետ Պալճյանի բազմաթիվ հոդվածներում, կոնդակներում և ճառերում վսեմ են հնչում հայ ժողովրդի մասին բնութագրական խոսքերը. «Ժողովուրդ մը, որ մոտ երեք հազար տարիներու պատմության մը ժառանգորդն է, ժողովուրդ մը, որ երկու հազար տարիներու հավատք մը և կազմակերպված Եկեղեցի մը ունի, ժողովուրդ մը, որ եվրոպական իմաստով կատարելության բարձունքները հասնող մշակութային արժեքներ ստեղծած է, ժողովուրդ մը, որ աշխատելու և արդյունաբերելու անսպառ ուժ ու կորով ունի, ժողովուրդ մը, որ իր հայրենիքի ազատության համար զոհաբերության և հերոսության աննման էջեր գրած է իր պատմության ընթացքին, այդպիսի ժողովրդի մը զավակները չէին կրնալ մոռնալ և չեն մոռցած իրենց մայր ժողովուրդը, իրենց մայր հայրենիքը» (Խոսք հայրենիքի մասին, Բուխարեստ, 1956, էջ 16): Եվ շարունակելով գրում է.

«Մեր հինավուրդ ազգի պատմությունը կենդանի հուշարձան մըն է՝ մարդկային աշխարհի հորիզոնին վրա բարձրացող, շաղախված ու մարմին առած նահատակներու արյունով, բարիին ու գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով և սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով: Ազգ մը չապրիր միայն իր նյութական բարիքներով, չապրիր միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կապրի նաև իր պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգիով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բարոյական նկարագրով» (էջ 126):

Կարապետ Պալճյանի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է ու համապարփակ: Նա արժեքավոր ու ինքնատիպ մտքեր ունի, ինչպես վերը նշեցինք, ոչ միայն մանկավարժության, այլև հոգեբանության, գրականության, փիլիսոփայության և կրոնի վերաբերյալ: Նա ապրել ու հիմա էլ ապրում է իր ժողովրդի ցավերով ու բազում հոգսերով, սակայն այդ դրժվարություններից դուրս գալու պայծառ ակնկալիքով և խոր հավատով՝ վաղվա «լուսաշող» ապագայի նկատմամբ. «Մեր առջև դրված են այսօր հոգևոր-բարոյական, դաստիարակչական և ընկերային բազում հարցեր: Մարդկային աշխարհը մեր դարուն կապրի շրջան մը՝ ոգեկան տագնապի,

բարոյական անհավասարկշռության և ընկերային խոր հակասություններու: Մարդոց և ժողովուրդներուն կպակսի հոգեկան ապահով կուվան մը, ատուգություն մը, առաջնորդող լույս մը» (էջ 67): Իսկ այդ առաջնորդող լույսը նա տեսնում է ժողովրդին կրթելու, դաստիարակելու, նրան դեպի ապահով կյանք տանելու մեջ: Իրավացիորեն նա գրում է. «Ժողովրդի դաստիարակի մը նպատակն է՝ հեղաշրջում առաջ բերել այդ ժողովրդին կյանքին մեջ դաստիարակչական աշխատանքով, կրթական միջոցներով՝ բարձրացնելու համար ժողովուրդը դեպի ավելի լուսավոր ու ազատ գիտակցություն մը, դեպի ավելի բարոյական ըմբռնումներու հորիզոն մը, դեպի մշակութային ավելի բարձր արժեքներու հասկացողություն և նաև դեպի տնտեսական ավելի բարգավաճ և ընկերային ավելի արդար վիճակ մը» (էջ 21)*:

Կրոնը, քրիստոնեությունը ինչպես մյուս ժողովուրդների կյանքում, այնպես էլ հայ ժողովրդի պատմության ընթացքում զգալի դեր է խաղացել գիտության, արվեստի ու կրթության բնագավառում: Հիշենք մեր հռչակավոր բանաստեղծ Նարեկացուն, բանաստեղծ և գիտնական Անանիա Ծիրակացուն, Տաթևացուն, որոնք բոլորն էլ եղել են քրիստոնյա հավատացյալներ:

Հավատքի շնչով է ստեղծված ամբողջ ոսկեդարյան հարուստ գրականությունը: Վանքերի գավիթներում կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ և իրենց հաջորդներին են փոխանցել քրիստոնեության լույսը: Կրոնը մեր ժողովրդի պատմության հազարամյակների ընթացքում եղել է ժողովրդի ոգին, ոգեշնչման աղբյուրը, մխիթարությունը՝ օրհասական պահերին:

Հայ Առաքելական Եկեղեցին մեծ ավանդ է ունեցել սերունդների դաստիարակության գործում, և այժմ էլ, երբ ժողովրդի մեջ խորհրդային երկար քնից հետո նորից հզորանում է քրիստոնեական հավատքը, Եկեղեցին ամեն ջանք գործադրում է՝ մեր ազգը լուսավորելու և հավատքի բերելու համար:

«Քրիստոնյա ըլլալ» իր հոդվածում Կարապետ Պալճյանը գտնում է, որ հայ երեխան պետք է ստանա քրիստոնեական դաստիարակություն, որ մեր ազգային վարժարանները, մեր մամուլը, մեր գրականությունը, մեր հանրային մշակութային կազմակերպությունները մեր սերունդներին պետք է դաստիարակեն քրիստոնեական ոգով՝ ամուր պահելով նրա մեջ ազգայինը, վսեմը և մարդկայինը: Նա գրում է. «Եկեղեցին, հոգևորականը պետք է ներկա լինեն հասարակական, ազգային կյանքի մեջ, սակայն որպես միարար, հաշտարար և խաղաղարար գործոն, ազգի և հայրենիքի գերագույն շահերի գիտակցությամբ»:

Կարապետ Պալճյանի մանկավարժական հայացքներն ամփոփված են մի շարք հոդվածներում՝ «Մեր հարազատ լեզուն», «Անձնավորության գաղափարի մասին», «Խոսք հայրենիքի մասին», «Բնազդ և գիտակցություն», «Քրիստոնյա ըլլալ», «Մտերիմ նամակներ հայ ծնողներուն» և հիմնականում «Խրիմյան հայրիկ որպես մանկավարժ» մեծ աշխատության մեջ: Գիրքը լույս է տեսել 1943 թ. Բուխարեստում: Գրքում հանգամանորեն քննված են Մկրտիչ Խրիմյանի տեսական-փիլիսոփայական հայացքները մարդու, նրա պատմա-դաստիարակչական դերի և հասարակության հետ նրա ունեցած փոխհարաբերության մասին (գլուխ Ա, Խրիմյան որպես մտածող): Ներկայացված են լուսավորություն տարածելու, իր ժողովրդին մտավոր բարձր մշակույթի հաղորդակից անելու, անձնական և հասարակական տընտեսություն կազմակերպելու Խրիմյանի տեսակետները (գլուխ Բ, Լույս, գի-

տություն, տնտեսություն): Վերլուծված են կրթության և նրա խրիմյանական ըմբռնման հատկանշական առանձնահատկությունները (գլուխ Գ, Կրթության ըմբռնում): Վերլուծված են նաև անհատի կատարելագործման այն եղանակները, որ առաջարկում է Խրիմյանը **ընդհանուր առմամբ** (գլուխ Դ, Անհատի կատարելագործում)և **կանանց հարցում** մասնավորապես (գլուխ Ե, Կնոջ դաստիարակությունը):

Քննված են համայնքի՝ որպես հասարակական միավորի ըմբռնումը Խրիմյանի մոտ (գլուխ Զ, Համայնքի ըմբռնում) և հողի՝ որպես «կենդանի իրականության» առարկայացած գիտակցությունը (գլուխ Է, Հողի սեր): **Առանձին գլխում** (գլուխ Ը, Խրիմյան և հայ գաղութները) **տրված են** Խրիմյանի վերաբերմունքը գաղթաշխարհի հայության վերաբերյալ և նրա առաջարկած գիտա-մանկավարժական եղանակներն ազգային ձևն ու բովանդակությունը պահպանելու համար: Նախավերջին՝ «Քննական ակնարկ» գլխում Կարապետ Պալճյանն ի մի է բերել իր եզրակացությունները Խրիմյան-մանկավարժի մասին «այնպես, ինչպես անոնք ի հայտ կուգան հեղինակին գործերու ընթերցումեն»: Վերջին՝ 10-րդ գլխում (Ժամանակագրական ուրվագիծ Խրիմյան Հայրիկի կյանքեն) տրված է Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության համառոտ աղյուսակը: Սակայն գիրքը, լինելով 19-րդ դարի Հայոց մեծ Պատրիարքի և Կաթողիկոսի՝ Խրիմյան Հայրիկի ընկերային, մանկավարժական հայացքների խոր ու համակողմանի ուսումնասիրություն, միաժամանակ ընդգրկում է Կարապետ Պալճյանի խիստ արժեքավոր մտքերն ու խոհերը մանկավարժության, անձի զարգացման ու դաստիարակության վերաբերյալ:

Միանգամայն արդարացի է Կարապետ Պալճյանի այն միտքը, ըստ որի մարդը և բնությունը մի օրգանական ամբողջություն են կազմում: Նա մարդուն բնութագրում է որպես կենսաբանական էակ և որպես հոգևոր, սոցիալական, ստեղծագործող, կառուցող ու աշխատող էակ: «Ամեն մարդ իր ծնունդով իսկ անքակտելի կերպով կապված է իր ու անոր բնաշխարհին, միասին մեկ օրգանական ամբողջություն մը կազմելով: Նույնանալ ժողովրդին հետ որպես կենսաբանական էակ, նույնանալ ազգին պատմության և մշակույթի հետ որպես բարոյական հոգևոր էակ, նույնանալ հայրենիքի հողին ու ջուրին հետ որպես աշխատող-ստեղծագործող էակ, վերջապես նույնանալ հայ պետությունը ամրացնող ու անոր ապագան պսակող իդեալներուն հետ որպես կամեցող և կառուցանող քաղաքական էակ: Ահա ճշմարիտ պատկերը ամբողջական հայուն»:

Շատ հետաքրքիր է Կ. Պալճյանի կողմից «մանկավարժություն» գիտության ձևակերպումը և բնութագրումը. «Մանկավարժությունը «դպրոցական գիտելիք» մը չէ միայն, այլ ընկերային գիտություն մը, մարդկային ընկերությունը բարենորոգելու և կատարելագործելու աշխատանքին նվիրված առաքելություն մը, որուն կաշխատակցին հոգեբանն ու բարոյագետը, ընկերաբանն ու պետական մարդը»: Սրա հետ սերտորեն կապված են նրա մտքերը մանկավարժի մասին. «Մանկավարժը մարդ մըն է, որ գիտակցությունը ունի մարդուն և անոր կյանքին անկատարության, բայց միաժամանակ կհավատա անոնց բարելավման և զինված գիտությամբ ու անսահման սիրով ու նվիրումով կանցնի գործի: Մանկավարժը միայն դպրոցի մեջ հերեխա կրթողը չէ: Մանկավարժը կրթողն է, դաստիարակողն է առհասարակ: Որովհետև միայն երեխան չէ, որ պետք է դաստիարակել: Դաստիարակին գործը երեխայով կսկսի, բայց կանգ չառներ երեխայության շրջ-

ջանի վերջավորությունը: Ավելին, դաստիարակչական գործին բուն նպատակը երեխայության շրջանեն անդին կգտնվի, անոր նպատակն է հասուն մարդոց ընկերությունը բարեփոխել»:

Խիստ ուսանելի են մանկավարժ Պալճյանի մտքերը մայրենի լեզվի մասին՝ այն համարելով ազգի գոյապահպանման կարևոր գործոն, ժողովրդի հոգեկան նկարագիրը պահող կենդանի ուժ, ժողովրդի հոգեծին որդի և նրա հավիտենականությունն ապահովող անգնահատելի արժեք: Կուզենայի մեջ բերել նրա խոսքերն ամբողջությամբ. «Լեզուն կենդանի մարմին մըն է,—օրգանիզմ մը,—ժողովուրդին հույզերեն և մտորումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտատև կենդանության ու աճման մեջ գտնըվող, և ինքն ալ իր կարգին այդ ժողովուրդին յուրահատուկ զգայնությունը, մտածելակերպը, հոգեկան նկարագիրը պահելու պաշտոնն ունեցող կենդանի ուժ մըն է: Ամեն անհատ կզգա ու կմտածե այն լեզվով, զոր կխոսի իբրև մայրենի լեզու: Հոգին, գիտակցությունը անկախ չեն խոսված լեզվեն: Այս վերջինը իր դրոշմը, իր գույնը, իր կաղապարները, իր շունչը կպարտադրե մտածումին և զգացումին: Լեզուն ժողովրդի մը հոգեծին որդին է, որ հասունության հասնելով, իր ծնողքը կպահե, կպահպանե և կառաջնորդե: Լեզուն հավիտենական ճշմարտություն է, կենդանի ուժ և արժեք այն իմաստով, որ կապահովե ժողովրդի մը հավիտենականությունը: Լեզուն կենդանի իրականություն մըն է, որ կյանք կառնե ժողովուրդեն և կյանք կուտա անոր, այո, ան կրնա և մեռնիլ, բայց իր հետ կթաղե նաև այդ ժողովուրդը որպես ազգային ամբողջություն, կթաղե նաև անոր մշակույթը»:

Եվ որպես անբաժանելի մի ամբողջություն Կ. Պալճյանը վերցնում է ժողովուրդ, հայրենիք, սեփական լեզու և մշակույթ միասնացած, քանի որ անհնարին է երկար ժամանակ մեկը պահել առանց մյուսի, որովհետև, իրոք, ամեն մի ժողովուրդ այն չափով է ժողովուրդ, որ չափով որ ունի սեփական երկիր, սեփական լեզու, մշակույթ և ինքնավար հավաքական կյանք:

Կուզենայի հանգամանորեն անդրադառնալ մանկավարժ Պալճյանի մտքերին ընտանեկան դաստիարակության անգնահատելի դերի մասին՝ անձնավորության ձևավորման ու զարգացման գործում:

Կարապետ Պալճյանը մեծ տեղ էր տալիս ընտանիքում երեխայի ֆիզիկական, աշխատանքային, բարոյական դաստիարակությանը՝ շեշտը դնելով հատկապես անձնական օրինակի դաստիարակչական մեծ ազդեցության վրա: Ըստ նրա անձնական օրինակով դաստիարակել՝ նշանակում է «կյանքը կյանքով բարեփոխել»: Անձնական օրինակը, հիրավի, «հոգեբանական մի բարդ ամբողջություն է», մի անգնահատելի երևույթ՝ իր հզոր ներգործությամբ ու հետևանքներով: Նա գրում է. «Պետք է ամենափոքր հասակեն իսկ, ընտանիքում վարժեցնել երեխան՝ բարին գործել, ճշմարիտը խոսիլ, արդար դատել, որպես կենցաղի բնական կերպեր: Իսկ այդ կերպը, այդ բարին ընելու հնարավորությունը պետք է ստեղծել երեխայի մեջ, ոչ թե միայն խրատով, «խոսքի» քարոզով, մտավորական միջոցներով, այլ ամեն բանե վեր՝ կենդանի, գործնական օրինակով, կյանքի փորձով: Անձնական օրինակի ուժով դաստիարակել՝ այդ կնշանակե կյանքը կյանքով բարեփոխել, այդ կնշանակե կենդանի իրականություն մը ուրիշ կենդանի իրականության մը ազդեցությամբ առաջնորդել ու ձևավորել: Օրինակը, հոգեբանական բարդ ամբողջություն մըն է, որ բնական կերպով հառորդիչ ըլլալու, վարակիչ ըլլալու հատկությունը ունի, մանավանդ, երբ ան կուգա կազմված տարեց անձի մը կողմե, որուն վրա երեխան բացարձակ վստահություն

ունի, անձի մը կողմե զոր երեխան կհարգե ու կսիրե (Խոյք հայրենիքի մասին, էջ 65):

Մանկավարժ Պալճյանն ընդունում է ժառանգականության գործոնը և գտնում, որ դեռ իրենց փոքր հասակում արդեն երեխաներն ունեն ապագա թերությունների սաղմերը: Եվ մենք ուզենք, թե չուզենք, գոհ լինենք դրանից, թե ոչ, պետք է տեսնենք, որ դա իրականություն է: Հետևաբար, նա բոլորովին չի ընդունում ֆրանսիացի մանկավարժ Ժան Ժակ Ռուսոյի ազատ դաստիարակության գաղափարը, ըստ որի երեխան ծնվում է որպես հրեշտակ և հասարակությունն է, որ նրան փչացնում է: Եվ եթե նա հասարակությունից հեռու, կտրված առանձին ապրի, ինչպես «ծաղիկն իր թաղարի» մեջ, ապա կդառնա կատարյալ բարոյական մի նկարագիր: Այս տեսակետը մանկավարժ Պալճյանը համարում է բանաստեղծական, ռոմանտիկ և միաժամանակ սխալ, քանի որ, իր խորին համոզմամբ, դաստիարակության գործը պետք է տարվի հետևողականորեն, կազմակերպված, երեխան պետք է մեծանա կարգապահության տակ մինչև այն տարիքը, երբ ինքը հոգեպես և մտավորապես կկարգավորվի, կգիտակցի և այնուհետև կկարողանա ինքն իրեն ազատ կերպով վերահսկել ու կառավարել:

Կարապետ Պալճյանը միջամտություն ասելով չէր հասկանում «բիրտ միջոցներ և կաշկանդումներ», այլ որ այն պետք է լինի «սիրով, գորովով, համոզելով», բայց միշտ հետևելով, որ եթե պետք լինի, որոշ բաներ արգելել երբեմն նույնիսկ պատժել, որպեսզի երեխան փոքր հասակից իմանա, որ որոշ բաներ թույլատրելի չեն: Այդպիսի դաստիարակությունը, ըստ նրա, ավելի «շինարար կդառնա, և արդյունքները բարի կլլլան»: Իսկ այս աշխատանքն առավելապես նա վերագրում է մայրերին ընտանեկան հարկի տակ՝ մինչև դպրոցական տարիքը և նաև դրանից հետո: Նա չափից ավելի է կարևորում մոր դերը երեխայի դաստիարակության գործում: Նա ասում է, թե աշխարհի ցանկացած կետում ինչպիսի կատարյալ դպրոց էլ լինի, չի կարողանա ամբողջական կերպով փոխարինել ընտանեկան դաստիարակությանը, մոր ուղղակի կրթական, դաստիարակչական աշխատանքին, քանի որ երեխան իր աճի, ձևավորման և զարգացման ընթացքում կարիք ունի մայրական գուրգուրանքի, գորովի ու սիրո: Որովհետև այդպես երեխայի հոգին կազնվանա, կծաղկի և իր մեջ թաքնված բոլոր դրական գծերն ի հայտ կգան: Բոլորովին չնսեմացնելով դպրոցի դերը, նա մնում է հարազատ այն ճշմարտությանը, ըստ որի դպրոցի հետ մեկտեղ դաստիարակչական գործը պետք է առաջ տանեն նաև մայրերը:

Մեծ երախտագիտությամբ ու խորին հարգանքով է խոսում Կ. Պալճյանը հայ կնոջ մասին. «Հայ կիները իրենց զգայուն սրտով և բնական խառնվածքով ու շնորհներով շատ ավելի ընդունակ են պահպան հրեշտակ դառնալու Հայ Եկեղեցիին և հայ ընտանիքին: Անապատի մեջ անգամ հայ կիները փարած մնացին իրենց հավատքին և իրենց մայրենի լեզվին: Ավազներու վրա իսկ գրեցին հայուն այբուբենը և քրիստոնեական հույսով փակեցին իրենց աչքերը: Մեծ և տոկուն ազգերու ճակատագիրը մանավանդ կիներու, մայրերու ձեռքին մեջ է: Անոնք է, որ կդաստիարակեն ու կհասցնեն մեծ հայրենասերներ, մեծ առաջնորդներ, հերոսներ և ստեղծագործողներ: Մեր Եկեղեցին շատ բան կպարտի հայ կիներուն՝ մեր պատմության ընթացքին: Ցավի և ուրախության, վտանգի և անապահովության, միջազգային բոլոր փոթորիկներուն մեջ մեր քույրերը և մայրերը ծանրագույն բեռը կրած են իրենց ուսերուն վրա»:

Նա գտնում է, որ հայ աղջիկները պետք է լավ կրթություն և դաստիարակություն ստանան, որ նրանց պետք է դաստիարակել հայկական ոգով, որովհետև նրանք պետք է դառնան ապագա մայրեր և նրանք պետք է իրենց զավակների մեջ ներշնչեն հայության ոգին, շունչը, մտածելակերպը և զգայությունը: Պալճյանը գրում է. «Մանկավարժ մը կըսե, թե երեխան կդառնա այն, ինչ որ Աստված ստեղծած է, և մայրը՝ դաստիարակած»:

Հնարավոր չէ չանդրադառնալ Կ. Պալճյանի մտքերին անձի ինքնաճանաչման և ինքնաքննադատության վերաբերյալ: Որպեսզի մարդն ինքն իրեն ճանաչի և ինքնաքննադատության ենթարկի, ըստ նրա խիստ անհրաժեշտ է «բացարձակ անկեղծություն՝ անվախ և վճռական», որը բավականին դժվար գործ է, իսկ շատ-շատերի համար՝ հոգեկան անկատարելիություն: Երբ մարդն ինքն իր հանդեպ բացարձակ անկեղծ է, դա միանգամայն կարելի է «բարոյական հերոսություն» համարել, որին, ցավոք, շատ քչերը կարող են հասնել: Պալճյանը գրում է. «Առանց անկեղծության ամեն բան կըձախողվի: Ու չկարծվի, թե այնքան դյուրին բան է ինքզինքը ճանչնալու անկեղծությունը ունենալ. այդ հնարավորությունը, այդ հոգեկան ուժը, կախում ունի մեծ չափով մարդու ստացած դաստիարակութենեն: Մակերեսային դաստիարակություն մը, արտաքին փայլ ունեցող դաստիարակություն մը կտանի դեպի ինքնակեղծում ու կցամաքեցնե ինքզինքդ ճիշտ ճանչնալու անկեղծության աղբյուրները: Հաճախ այդ աղբյուրները այնքան կանհետին, որ այդպես սխալ դաստիարակված անհատը ինքն ալ չի զգար ինքզինքին կեղծումը, ինքն ալ անկեղծորեն կհավատա իր կեղծ վիճակին իրականության: Իրական դաստիարակություն մը պետք չէ ծածկե բնությունը և անոր իրական կողմերն ու թաքու ծալքերը: Ավելին՝ պետք է զանոնք փնտրե և դուրս, լույս աշխարհ բերե: Այսպես միայն, բացարձակ անկեղծությամբ միայն կարելի է իրականացնել ինքնաճանաչումը»:

Լիովին համամիտ լինելով Կ. Պալճյանի այս խոսքերին, ուզում եմ ավելացնել, որ ինքնախաբկանքը շատ չարիք է բերում. մեծամտություն, ինքնահավանություն, չմահավանություն, դիմացինին չգնահատելու, նսեմացնելու հատկություն, ինքնասիրահարվածություն, քամահրանք ուրիշի նկատմամբ, ամեն լավի ժխտում և բնավորության այլ բացասական գծեր, որոնք միայն կխաթարեն այդ մարդու հոգեբանությունը:

Կարծես թե այսօրվա համար գրված լինեին Կ. Պալճյանի 1943 թ. արտահայտած հետևյալ մտքերը՝ ուղղված մեր հայ երիտասարդությանը. «Մեր երիտասարդությունը, մանավանդ մտավորական երիտասարդությունը պետք է լավ ըմբռնե այն իրողությունը, թե մշակութային անհատը, բարոյական մարդը անհրաժեշտորեն կապված պետք է մնա օրգանական ամբողջության մը, այսինքն իր ժողովրդի համայնքին. և թե այդ իր բնական ու մտերիմ շրջանակեն դուրս՝ կսկսի այլասերումը ոչ միայն ազգային այլ նաև մարդկային տեսակետեն, որովհետև եթե քո սեփական ազգեդ հեռանաս, ուրիշ ազգի մեջ երբեք իրապես չես կրնար մուտք գործել»:

Խոսքս ուզում եմ ավարտել իմաստասեր, մանկավարժ և հոգեբան, խիստ ազգասեր և հայրենասեր, մեր ժամանակի կրոնական մեծ գործիչ Կաթողիկոս Պալճյանի, նույն ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի լավատեսական հետևյալ խոսքերով.

«Հայ ազգը հոգեկան արժեքների ծնունդ է և հոգեկան արժեքների ծնունդ տվող ժողովուրդ: Հայ ժողովուրդը այլ բանի չի տենչար, բայց միայն

ունենալու ափ մը ազատ հող, բաժակ մը լույս և խաղաղ կյանք, շարունակելու համար իր առաքելությունը, արդարացնելու համար իր կոչումը աշխարհի ժողովուրդների մեծ ընտանիքին մեջ:

Թե որպես Հայաստանյայց Եկեղեցվո սպասավոր, թե որպես հայ ժողովրդի հարազատ զավակ, կաղոթեմ և կհավատամ, թե բարիին ուժերը պիտի հաղթանակին աշխարհի վրա և խաղաղության սպիտակ աղավնին պիտի չներկվի արյունով»:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Խրիմյան Հայրիկ որպես մանկավարժ, 155 էջ, 1943 թ., Բուխարեստ:
2. Մտերիմ նամակներ հայ ծնողներուն, «Արազ» օրաթերթ, 1937 թ., նո. 546 (սեպտեմբեր 23), 1-ին հ. և 1937 թ., նո. 554 (նոյեմբեր 7), 2-րդ հ.:
3. Խոսք հայրենիքի մասին, Բուխարեստ, 1945 թ., 27 էջ:
4. Բնազդ և գիտակցություն Անդրադարձ, 1938, նո. 9:
5. Մեր հարազատ լեզուն, «Էջմիածին» ամսագիր, 1950 թ., նո. 3, մարտ—ապրիլ:
6. Անձնավորության գաղափարի մասին, Բուխարեստ, 1938 թ., էջ 40:
7. Հոգեբանության դասեր, Էջմիածին, 1961 թ., 119 էջ:
8. Հայրենի արևին տակ, Բուխարեստ, 1954 թ., 112 էջ:
9. Քրիստոնյա ըլլալ, «Հերկ», 1938 թ., № 11:

ՆՐԱ ՄԱՍԻՆ

1. Վազգեն Ա—Հայրապետ Հայոց, Համառոտ տարեգրություն (1908—1955):
2. Վազգեն Ա—Հայրապետ Հայոց (Կենսագրություն, Կոնդակներ, Ճառեր, Քարոզներ) Էջմիածին, 1958 թ., Ա գիրք:
Գիրք Բ—Կոնդակներ, Ճառեր, Քարոզներ, 1960 թ., Էջմիածին:
Գիրք Գ.—Կոնդակներ, Ճառեր, Քարոզներ, 1976 թ., Էջմիածին: